



Հովհաննես Թումանյան

Պոչատ աղվես

Լինում է, չի լինում՝ մի պառավ .
Էս պառավն իր էծը կթում է, կաթը վեր դնում,
գնում է ցախ ու փետ բերի, որ կրակ անի, կաթն եփի:

Մի աղվես գալիս է, գլուխը կոխում կաթնի ամանը, ուտում:

Պառավը վրա է հասնում, ցաքատով տալիս է, աղվեսի պոչը կտրում:

Պոչատ աղվեսը փախչում է, գնում է մի քարի վրա կանգնում ու էսպես խնդրում .

- Տատիկ, տատիկ, պոչս տուր, կցեմ, կցմցեմ, գնամ ընկերներիս հասնեմ, որ ինձ
չասեն՝ պոչատ աղվես, ո՞րտեղ էիր:

Պառավն ասում է .

- Դե գնա ինձ կաթը բե՛ր:

Աղվեսը գնում է կովի մոտ:

- Կովիկ, կովիկ, կա՛թ տուր ինձ, կաթը տանեմ պառավին տամ, պառավը պոչս
տա, կցեմ, կցմցեմ, գնամ ընկերներիս հասնեմ, որ ինձ չասեն՝ պոչատ աղվես,
ո՞րտեղ էիր:

Կովն ասում է .

- Դե գնա ինձ համար խո՛տ բեր:

Աղվեսը գնում է արտի մոտ:

- Արտիկ, արտիկ, խո՛ւտ տուր ինձ, խոտը տանեն կովին տամ, կովը ինձ կաթ տա, կաթը տանեն պառավին տամ, պառավը պոչս տա, կցեն, կցնցեն, գնամ ընկերներիս հասնեն, որ ինձ չասեն՝ պոչատ աղվես, ո՞րտեղ էիր:

- Դե գնա ինձ համար ջուր բեր: Աղվեսը գնում է աղբյուրի մոտ:

-Աղբյուր, աղբյուր, ջո՛ւր տուր ինձ, ջուրը տանեն արտին տամ, արտը ինձ խոտ տա . խոտը տանեն կովին տամ, կովը ինձ կաթ տա . կաթը տանեն պառավին տամ, պառավը պոչս տա, կցեն, կցնցեն, գնամ ընկերներիս հասնեն, որ ինձ չասեն՝ պոչատ աղվես, ո՞րտեղ էիր:

Աղբյուրն ասում է .

- Դե գնա կուժ բեր:

Աղվեսը գնում է աղջկա մոտ:

- Աղջիկ, աղջիկ, կո՛ւժ տուր, կուժը տանեն աղբյուրին տամ, աղբյուրը ինձ ջուր տա . ջուրը տանեն արտին տամ, արտը ինձ խոտ տա . խոտը տանեն կովին տամ, կովը ինձ կաթ տա . կաթը տանեն պառավին տամ, պառավը պոչս տա, կցեն, կցնցեն, գնամ ընկերներիս հասնեն, որ ինձ չասեն՝ պոչատ աղվես, ո՞րտեղ էիր:

- Դե գնա ուլո՛ւնք բեր ինձ համար:

Աղվեսը գնում է շարչու մոտ:

- Չարչի, շարչի, ուլո՛ւնք տուր, ուլունքը տանեն աղջկան տամ, աղջիկը ինձ կուժ տա . կուժը տանեն աղբյուրին տամ, աղբյուրը ինձ ջուր տա . ջուրը տանեն արտին տամ, արտը ինձ խոտ տա . խոտը տանեն կովին տամ, կովը ինձ կաթ տա . կաթը տանեն պառավին տամ, պառավը պոչս տա, կցեն, կցնցեն, գնամ ընկերներիս հասնեն, որ ինձ չասեն՝ պոչատ աղվես, ո՞րտեղ էիր:

Չարչին ասում է .

-Դե գնա ինձ համար ձո՛ւ բեր:

Աղվեսը գնում է հավի մոտ:

- Հավիկ-հավիկ, ձո-ձո տուր, ձո-ձուն տանեն չարչուն տամ, չարչին ինձ ուլունք տա . ուլունքը տանեն աղջկան տամ, աղջիկը ինձ կուժ տա . կուժը տանեն աղբյուրին տամ, աղբյուրը ինձ ջուր տա . ջուրը տանեն արտին տամ, արտը ինձ խոտ տա . խոտը տանեն կովին տամ, կովը ինձ կաթ տա . կաթը տանեն պառավին տամ, պառավը պոչս տա, կցեն, կցնցեն, գնամ ընկերներիս հասնեն, որ ինձ չասեն՝ պոչատ աղվես, ո՞րտեղ էիր:

Հավն ասում է . - Դե գնա ինձ համար կո՛ւտ բեր:

Աղվեսը գնում է կավորի մոտ:

- Կավոր, կավոր, կո՛ւտ տուր ինձ, կուտը տանեն հավին տամ, հավը ինձ ձո տա . ձուն տանեն չարչուն տամ, չարչին ինձ ուլունք տա . ուլունքը տանեն աղջկան տամ, աղջիկը ինձ կուժ տա . կուժը տանեն աղբյուրին տամ, աղբյուրը ինձ ջուր տա . ջուրը տանեն արտին տամ, արտը ինձ խոտ տա . խոտը տանեն կովին տամ, կովը ինձ կաթ տա . կաթը տանեն պառավին տամ, պառավը պոչս տա . կցեն, կցնցեն, գնամ ընկերներիս հասնեն, որ ինձ չասեն՝ պոչատ աղվես, ո՞րտեղ էիր:

Կավորի մեղքը գալիս է, մի բռուն կուտ է տալի: Աղվեսը կուտը տանում է հավին, հավը ձո է տալի . ձուն տանում է չարչուն, չարչին ուլունք է տալի . ուլունքը տանում է աղջկան, աղջիկը կուժ է տալի . կուժը տանում է աղբյուրին, աղբյուրը ջուր է տալի . ջուրը տանում է արտին, արտը խոտ է տալի . խոտը տանում է կովին, կովը կաթ է տալի . կաթը տանում է տալի պառավին, պառավը պոչը տալիս է իրեն . կցում է, կցնցում, վագում է գնում, իր ընկերներին հասնում: